

Հարգելի՝ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄ) նախագիծ հանդիսացող Արցախի Էլեկտրոնային Գրադարանի կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆԿԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Ծնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների Էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhlis.am/>

E-mail: info@artsakhlis.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhlis.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhlislibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>



Գ.Մ.Դ. 8421

Ը 661


Կազմով՝ Գ. Ն. Երգեկյան

Ալեքսանդր Շիրվանզադե

Պատմվածքներ (կազմ.՝ Գ. Ն. Երգեկյան), Երևան, 1986. — 175 էջ:

Ժաղովածում ընդգրկում է հեղինակի լավագույն պատմվածքների մի շարք:
Ը 661 Դրանցում պարզ երևում է գրողի մարդասիրությունը, հայրենասիրությունը, նրա ատելությունը ստորագրածության, շողոթորթության, մարդու ստորագրելու նկատմամբ:

4702080100 (51) 206 1986
Ը 702 (01) 1986



Александр Ширванзаде

РАССКАЗЫ

(на армянском языке)

Издательство «Луис»

Ереван—1986

© «Լույս» հրատարակչություն, կազմելու համար, 1986



ՀԱՅՐՆ ՈՒ ՈՐԴԻՆ

Սիմոնը շքավոր էր և գիտեր, որ չքավորությունն ամոթալի բան չէ: Բայց գիտեր նաև, որ եթե մարդ շաշխատի նրա լուծը տանել պատվով, կարող է դառնալ ամոթալի:

Արծեստով Սիմոնը զրաշար էր և իշարկե, ստիպված էր կարդալ այն բոլորը, ինչ որ շարում էր: Տպարանատերը լուրջ գրքերն ու գրքույշերը նրան էր տալիս շարելու, որովհետև նրան էր համարում ամենից գրափես և ամենից բարեխիլճաւ:

Քսան ու մեկ տարվա ընթացքում Սիմոնը կարդացել էր բավականաշափ խելք բաներ և շատ էր մտածել: Նա բոլոր հեղինակներին հավասար հարգանքով շէր վերաբերվում: Իր տեսակի քննադատ էր: Առանձնապես խստապահանջ էր բարոյախոսների վերաբերմամբ: Նրա համոզմունքով գրողն ինքը նախ և առաջ պիտի լինի այն, ինչ որ պահանջում է ուղիւներից: Այլապես գրողն արժեք չուներ նրա աշքում: Չսիրած հեղինակների գործերը շարելիս՝ Սիմոնի նեղ, նիշար ու պղնձագույն դեմքի գրա շարունակ խաղում էր մի հեղինական ժամփու: Նա իր մտքում ասում էր:

— Ստի՛ր, ստի՛ր, բարեկամ, բայց ես քեզ լավ եմ հանաշում:
Մի անդամ նա, ընդհարվելով մի ինչ որ խմբագրի հետ, ասաց.

— Եթե դուք լավ մարդ լինեիք, այդքան չէիք շոգոքորթի մեծամեծակերին:

Վիրավորված խմբագիրը պահանջեց, որ Սիմոնը վոնդվի տպարանից: Տպարանատերը չհամաձայնվեց, ասելով.

— Ես չեմ կարող ինձ դրկել Սիմոնի պես մի լավ բանվորից: Նա իմ տպարանի աշքն է:

Ընկերները հարգում էին Սիմոնին և իրարու հետ ընդհարվելիս միշտ նրան էին դատավոր կանչում: Ոմանք իրենց հոգու խորքում վախենում էին նրանից:

Սիմոնը բարեսիրու էր, բայց խստապահանջ՝ մարդկային արարքների վերաբերմամբ: Առում էր ամբողջ հոգով բոլոր անարդարությանները, խոշորներից սկսյալ մինչև ամենափոքրերը: Ուղղամիտ և արդարադատ էր: Անողոք էր, երբ հարկավոր էր պարսավել, անսահման ներողամիտ՝ երբ վիրավորում էին նրան: Հարգելով զորեղներին, չէր թեքլում նրանց առչու Պաշտպանակ նրանց օգտի համար:

Փիլիսոփա չէր Սիմոնը, բայց գիտեր արհամարձել կյանքի դառնությունները: Ընտանեկան լուծը տանում էր անտրտոնջ, թեև ժանր էր շարաթական մի քանի տասնյակ ուրբիններով կերակրել վեց բերան:

Նրա չորս զավակներից ամենամեծը տասնուշինգ տարեկան վահանն էր՝ աշակերտ Ներսիսյան դպրոցի: Մնացյաները 3,5 և 9 տարեկան աղջիկներ էին: Վազ առավոտից մինչև ուշ երեկո նրա կինը աշխատում էր անընդհատ և հազիվ հազ կարողանում էր քիչ թե շատ կարգ ու կանոն ու մաքրություն պահպանել իր աղքատիկ տնտեսության մեջ: Իր բնույթով ու կենսական պահանջներով Շողիկը Սիմոնի հակապատկերն էր: Անիծում էր իր ճակատագիրը առավոտից մինչև երեկո և կծու խոսքերով հանդիմանում Սիմոնին նրա աղքատության համար: Նա քահանայի աղջիկ էր: Նա շարունակ կրկնում էր.

— Եթե հայրս գիտենար, որ դու ինձ այդպես ես պահելու, քեզի կը տա՞ր իր աղջիկը:

Մոռանում էր, որ տեր Սեսիրվը շատ լավ գիտեր զրաշարի նյութական վիճակը: Մոռանում էր նաև իր անհրապույտ արտաքինը, որ չէր կարող դրավել Սիմոնից մի աստիճան ավելի խստապահանջ մեկին:

Կնոջ անվերջ հշտամբանքներից ծանձրացած գրաշարը նայում էր իր կինումոնագույն խոշոր ու խելացի աշքերով կարճահասակ, կարճավիզ կոչտ ու կոպիտ կողակցին և զարմանում էր, թե նրա ինչույր հրապությունը թայց նա այնքան նրազգաց էր, որ երբեք Շողիկի երեսովը չէր տալիս նրա տղեղությունը: Չէր էլ վիճում նրա հետ, զգալով, որ շունե բա-

Վականաշափ զորեղ հիմք՝ աղքատությունը պաշտպանելու համար: Միայն կրկնում էր:

— Դու ինձնից աղնվություն պահանջիր և ոչ հարստություն:

Շողիկն ամեն անգամ կծու հեգնանքով ժպտում էր, այդ դարձվածը լսելիս: Մի անգամ այնպես կատաղեց, որ ասաց:

— Մի զույգ կոշիկներ երեխայիս համար ավելի թանկ արժե իմ աշքում, քան քո ազնվությունը:

Սիմոնը մի հոգս և մի փափագ միայն ուներ՝ ինչպես և է տալ Վահանին բարձր ուսում: Իր լավագույն հույսերը նրա վրա էր դրել էճ, մինչև այժմ մի կերպ ապրել են, էլի կապրեն մի քանի տարի: Առաջանեարդն հինգիրորդ գասարանումն է, երկու տարուց հետո նա կլինի համար սարանում և մեկ էլ տեսար մի օր ավարտեց ու եկավ բժիշկ կամ իրավաբան՝ միհնույն է: Այն ժամանակ նա կիսու Շողիկի հետ:

— Մինչև նրա գալլ ես կդնամ մյուս աշխարհը, — ասում էր անհաշտ կինը և շարունակում էր կրծոտել Սիմոնի համբերությունը:

Վերջին ժամանակ Սիմոնը շատ անհանգիստ էր թան այն է, որ Վահանը ծովացել էր, առաջվա սիրով չէր հետեւում իր դասերին: Արդեն երկու անգամ Սիմոնին կանչել էին դպրոց և այդ մասին հայտնիլ:

Սիմոնը սովոր չէր իր զավակներին ծեծով կրթելու նա գիտեր, որ ծեծն առհասարակ խրատելու ու կրթելու միջոց չէ: Նա միշտ հիշում էր մի գրբոյկում կարգացածը, թե Զվիշերիայում կենդանիներին անգամ չեն ծեծում:

— Երեխաներին պիտի սովորեցնել հարգել ու սիրել ծնողներին և ոչ թե վախենալ նրանցից, — ասում էր նա հաճախ Շողիկին, որ այս դպրում ևս համաձայն չէր նրա հետ և մեկ-մեկ ծվծվացնում էր իր փոքրիկներին:

Եվ նա ինքն աշխատում էր խոսքով ուղղել Վահանին: Սակայն երբեմն չէր կարողանում կատաղությունը զապել և իր խրատելու ավարտում էր սպառնալիքով:

— Եթե քեզ դպրոցից դուրս անեն, քեզ կսպանեմ:

Վահանը, որ արտաքուստ իր մոր պատճենն էր իր լայն երեսով, նեղ ճակատով, տափակ քթով ու իրարից շատ հեռու տեղափորված աշքերով, լսում էր նրան լուս, գլուխը կրծքին թեքած: Նա միանդամայն հանդիսաւ էր, որ Սիմոնը երբեք ձեռ չի բարձրացնի որդու վրա: Քիչ է կան փողոցում թափառող ծույլ տղաներ, որոնց զրկել են ուսումից՝ ո՞ր մեկն է սպանվել դրա պատճառով: Բայց Վահանը բացի ծույլ լինելուց՝ և անհանգիստ էր ու շար: Ինքը դասերը շպատրաստելով, խանգարում էր և ընկերներին:

Երկրորդ անգամ Սիմոնը դպրոց կանչվելով, մանկավարժական խորհրդից լսել էր հետեւյալ սպառնալիքը:

— Եթե դուք չուղղեք ձեր որդուն, ստիպված կլինենք նրան արձակել: Այդ տեսակ աշակերտները դպրոցի շարիքն են:

Մի երեկո, տպարանից տուն գնալով, լսեց որ դարձյալ իրեն դպրոց հն կանչել:

— Սիրտս վկայում է, — ասաց նա Շողիկին, որ այս անգամ այդ անպիտանին գորս են անելու դպրոցից:

— Քանդվի նրանց դպրոցն ու իրենք էլ գետինը մտնեն, — գոշեց Շողիկը: — Շատ են փքվում իրենց տված ուսումնու:

Երբ Վահանն երևաց, Սիմոնը այնպիսի երկարատև ու խորը թափանցող մի հայացք ձգեց նրա վրա, որից մի ուրիշ զավակ կդուղար: Բայց Վահանի անտարբեր ու բութ դիմքի մի մկանն էլ շարժվեց: Միայն նրա աշքերի բիրերը ծովեցին մի կողմը և սպիտակուցները պսպղացին շիկացրած երկաթի պեճերի պես: Հայրն էր, որ սարսափեց որդու աշքերից: Այդ աշքերը լավ բան չէին խոստանում նրան:

Հետեւյալ առավոտ Սիմոնը բանվորական կապույտ շապիկի փոխարեն հագավ իր տանային հագուստը օսլայած շապիկով և գնաց դպրոց, կանխապես մտնելով տպարան և տիրոջից մի ժամվա արձակուրդ իրնդրելով: Նրա սիրան ուժգին բարախում էր ամոթի զգացումից: Ի՞նչ պատասխան պիտի տա նա մանկավարժներին, ինչո՞վ պիտի պաշտպանե ու արդարացնե իրեն ու իր որդուն:

Նա ստիպված եղավ սպասել գրեթե մի ամբողջ ժամ, որովհետեւ առաջին դասը նոր էր սկսվել, երբ նա մտավ դպրոց:

Վերջապես, լսեց զանգակի ձայնը: Աշակերտները աղմուկով դուրս թափացին բոլոր դասարաններից միաժամանակ, ինչպես մեղուները փեթակից և դպրոցի բակը լցրին աղմուկով: Սիմոնն աշքերով փնտրեց Վահանին ու չգտավ: Այս հանգամանքն ավելի սաստկացրեց նրա անհանգրաւությունը: Նա սկսեց ամաշել աշակերտներից անգամ: Նրան թվաց, որ յուրաքանչյուր պատանի մտքում ծաղրում է ու խղճում իրեն:

Նրան կանչեցին ուսուցչական սենյակը:

Այստեղ կանաչ մահուղով ծածկված երկայն սեղանի քով նստած էին սիայն տեսուչն ու մի վերակացու: Սիմոնը ներս մտավ անլստահ քայլերով, խոնար գլուխ տվեց ու կանդնեց գոռների առջև:

— Առաջ եկեք, — հրամիրեց տեսուչը, մի շափաղանց նի՞ար մարդ կարծիկ ալեխան մորուքով:

Նրա ձայնը Սիմոնին թվաց շարագրւշակ, և նայելով նրա կնճռտված ճակատին, զգաց որ այս անգամ լսելու է ավելի վատ բան:

Նա չէր սխալում:

— Պարոն Մուրադյան, — արտասանեց տեսուչը չոր ու կտրուկ ձայնով, մանկավարժական փորձուրդը որոշել է ձեր որդուն արձակել դպրոցից: Ֆավում ենք, իհարկե, բայց այլևս չենք կարող նրան պահել:

Հարվածը գորեղ էր, բայց Սիմոնն արդեն պատրաստվել էր նրան ընդունելու: Նա չէր գուշակում, որ իրեն սպասում է մի ուրիշ ավելի զարդեղ հարված:

— Ծովության ու շարության պատճառո՞վ եք արձակում իմ որդուն, — Հարցրեց նա հազիվ լսելի ձայնով:

Տեսչի դեմքով սահեց մի հեգնական ժպիտ:

— Դժբախտաբար, — ասաց նա ճակատը շփելով, — ձեր որդու ախտը միայն ծովությունն ու շարությունը չեն:

— Հապա՞:

— Նա գող է:

Սիմոնը ցնցվեց, մի քայլ ետ կանգնեց և գլուխը հպարտ բարձրաց նելով, արտասանեց:

— Պարոն տեսուչ, ես ձեզ խնդրում եմ շանարգել իմ որդուն:

— Պարոն Մուրադյան, ձեր որդին գող է, — կրկնեց տեսուչը, յուրաքանչյուր քառք առանձին շեշտելով: Մինք նրա մասին կասկածներ ունենք զեր անցյալ տարի, հիմնվելով մի քանի աշակերտների գանգատների վրա: Բայց չէինք կարող առանց ապացույցների հավատալ, որ Զեզ նման մի ազնիվ մարդու որդին կարող է այդպիսի ախտ ունենալ: Դժբախտաբար ալաօր մեր ձեռքում կան անհերքելի փաստեր, ուստի որոշեցինք զպացն ապատել մի ախտավորից:

— Բայց ի՞նչ է գողացել իմ որդին և ո՞ւմից է գողացել, — Հարցրեց Սիմոնը:

— Պարոն Զանամյանց, — դարձավ տեսուչը վերակացուին, — կարդացեք ձեր կազմած «ցուցակ-հանցանացը»:

Վերակացուն, որ մի ակնոցավոր ծերունի էր, վերցրեց իր առջև դրած թուղթն ու կարդաց: Ապացուցված էին ու վկաներով հաստատված ինը դեպքեր գողության, որոնցից ամենափոքրն էր մի ոսւբի, ամենամեծն մի արձաթյա ժամացույց՝ վերջին դասարանի մի աշակերտից: Ցուրաքանչյուրը մուրճի մի-մի հարված էին Սիմոնի համար:

Նա լսում էր գլուխը կրծքին թեքած, շունչը զսպած, ոտքից մինչև գլուխ գողալով:

Երբ վերակացուն ավարտեց, Սիմոնը հարցրեց.

— Այդ գողությունները խոստովանե՞լ է իմ որդին:

— Մի քանիսը, այո, — պատասխանեց վերակացուն:

— Գողացած իրերից կամ փողերից ոչի՞նչ չի վերադարձրել:

— Բայց մի զմելիից ոչինչ չէ վերադարձրել:

— Ո՞քան է ձեր կարծիքով գողացած փողերի գումարը, Ժամացույցն էլ հաշվեցեք:

— Փողերի գումարն է վաթսունեհինք ուորլի, իսկ Ժամացույցն արժեքը ոչ պակաս, քան տասնեհինք ուորլի:

Սիմոնը քրքրեց իր գրանները: Գտավ ընդամենը տասնմեկ ուորլի: Դողլոցուն ձեռքով զնելով այդ գումարը սեղանի վրա, նա ասաց.

— Մնացայլը թույլ տվեք թերել հետո: Ասաց և առանց մի խոսք ավելացնելու, գլուխ տվեց ու գուբր եկավ:

— Խեղճ մարդ, ինչպե՞ս աղդվեց, ասաց տեսուչը:

Սիմոնը զնում էր տուն: Ճանապարհին նա հիշեց տպարանը, և մըտնելով այնտեղ հայտնեց տիրոջը, որ այդ օրը չի կարող աշխատել:

— Ի՞նչ է պատահէլ, գու դողում ես, — Հարցրեց տպարանատերը պարմացած:

— Ոչինչ, — ասաց Սիմոնը ու հեռացավ:

Երկինք և երկիր մթագնել էին Սիմոնի աշքերում: Ամոթի ու խայտառակության զգացումն էր պաշարել նրան: Նրա որդին գո՞զ: Մի՞թե աստված կարող է լինել այդպահ դաժան: Ինչո՞ւ, ի՞նչ մեղեքիր համար: Մի՞թե նա չէ, որ իր շրջանում ամենից կատաղի է բողոքել մարդկային այլանդակ արարքների զեմ:

— Գո՞զ, իմ որդին, գո՞զ, — կրկնում էին նրա բորբոքված շրթունքներն երեմն այնքան լսելի ձայնով, որ անցորդները կանգ էին առնում և նայում նրա ետնից:

Գո՞զ՝ Սիմոն Մուրադյանի հարազատ զավա՞կը: Այլևս ի՞նչ երեսով նա պիտի երեա իր ընկերներին ու ծանոթներին: Ի՞նչ պիտի մտածեն նրանք: Չե՞ որ որքան ևս աշխատե թաքցնել իր խայտառակությունը, վերջի վերջու ամենքը գիտենալու են: Մի՞թե կա հնար զսպել հարյուրավոր աշակերտների բերանները, Մի՞թե յուրաքանչյուրը նրանցից հենց այսօր ենք չի պահանջում իր ծնողներին սոսկալի եղելությունը:

— Ի՞նչ է պատահէլ քեզ, մարդ, երեսիդ գույն չկա, — դիմավորեց նրան նողիկը:

Սիմոնը ոչինչ շասաց, զենք ձգեց գլխից իր լայնեցր գլխարկն ու նստեց նեման, կապերտով ժամանակած թախտի վրա:

— Ի՞նչ է պատահել, ասելու ես թե չէ, — Համառեց Շողիկը:

— Մի բաժակ ջուր տուր ինձ, — արտասանեց Սիմոնը խեղդված ձայնով, — մի բաժակ ջուր:

Կուլ տալով մի քանի կում ջուր, Սիմոնը կարողացավ ուշքը փոքր ինչ ժողովել և տխոր եղելով յունը պատմեց:

Շողիկը կատաղեց ու սկսեց հայճոյել տեսչին, վերակացուին, բոլոր աշակերտներին և ամբողջ դպրոցը: Սուս են ասում ամենքը, Վահանը ոչ ոքից և ոչինչ չի գողացել: Նրան ստիպել են, վախեցրել, և ինքն իրեն զըրպարտել է: Վերջապես, ներ իսկապես նա մեկից կամ մյուսից գողացել է մի քանի կուպեկ, ինչ մեծ հանցանք է: Երեխա է, չի հասկանում: Մի՞թե դրա համար կարելի է զրկել նրան ուսումից:

— Բավակա՞ն է, կին, բավակա՞ն է, գոյեց Սիմոնը, չկարողանալով այն լսել իր կողակցի բարբաջանքները: Կանչիր այստեղ անզգամին:

Վահանը խոհանոցում էր: Շողիկը բռնեց նրա թից ու ուժով տարավ Սիմոնի մոտ, ասելով.

— Մի վախենար, ես չեմ թողնի, որ նա քեզ ծեծի:

Կարիք չկար Վահանին պաշտպանելու Սիմոնը մտադիր չէր նրան ծեծելու: Նա նույնիսկ շնախատեց նրան: Նա միայն նայեց նրա երեսին և ասաց դառն հեղությամբ:

— Ծնորհակալ եմ, որդի, զու լավ վարձատրեցիր քո հորը:

Վահանը հասկացավ հոր կծու ծաղրը և հոգով ուրախացավ, որ այդպիս հեշտ է ազատվում: Նա բոլորովին վշտացած չէր, որ իրեն արձակել են դպրոցից: Նա վաղուց էր սպասում այդ: Վաղուց էր ձանձրացել ու զգել ուսումից: Նրա ուշ ու միտքն ուրիշ տեղ էր: Նա ուներ ավելի ուրախ շրջան, քան դպրոցական ընկերները:

Սիմոնը չգտեր, որ ահա մի տարի է, ինչ որ իր որդին կրթվում է մի ուրիշ դպրոցում...

Խայտառակ եղելով յունն այնքան էր ներգործել Սիմոնի վրա, որ ամբողջ մի շաբաթ նա գործի չվնաց: Բայց հարկավոր էր գնալ, և վերջապես, մի օր գնաց: Տպարանատիրոջ հարցերին նա պատասխանեց հակիրճ:

— Հիվանդ էի:

Ծնկերները նկատեցին, որ մի շաբաթվա մեջ նա մի քանի տարով ծերացել է: Նա ոչինչ չասաց: Նա չէր ուղում խոսել ոչ ոքի հետ: Գլուխը քաշ աշխատում էր, խուլս տալով ընկերների հայացքներից անգամ: Բնագդմամբ զգում էր, որ արդեն ամեն քան հայտնի է նրանց: Եվ չէր սխալվում:

Ամբողջ օրը Սիմոնը և Վահանը իրարու չէին հանդիպում ու չէին

ուզում հանդիպել: Առավոտները Սիմոնն աշխատում էր անից ավելի վաղ դուրս գալ, քան Վահանը կզարթներ: Ճաշի միջոցին նույնպես չէին հանդիպում: Շողիկը Վահանին կերպարում էր մյուս սենյակում կամ խոհանոցում, վախենալով Սիմոնի տարօրինակ մասը տրամադրությունից: Երեկոները Վահանը առն է գալիս այն ժամանակ, երբ Սիմոնը քնած էր կամ ձեացնում էր, թե քնած է:

Գրեթե ամեն օր Վահանն իր մորը տալիս էր որոշ գումար: Թե ինչպես և որտեղից էր վաստակում այդ փողերը՝ չէր ասում: Շողիկը մի քանի անգամ հետաքրքրվեց իմանալ և, որոշ պատասխան շատանալով, լոեց: Վահանն ասել էր.

— Եթե հայրիկին հայտնես, որ ևս քեզ փող եմ տալիս, էլ մի կապեկ չեմ տա:

Եվ Շողիկը չէր հայտնում:

Մի օր Վահանը առն եկավ ծեծված ու զարդված, դեմքն արյունաշղախի: Մոր համառ հարցերին նա, տատանվելով ու կակաղելով պատասխանեց, թե տրամվայից է ընկել: Եվ երեք օր տանը մնաց պառկած: Տպարանում Սիմոնի ընկերներից մեկն ասաց նրան, որ ինքն տեսել է, թե ինչպես ամբոխը հարձակվել ու ծեծել է Վահանին:

Բայց ինչու չասաց: Մի ուրիշ օր Վահանը տոնն եկավ արբած և, դրանից դուրս բերելով մի քանի հարցուրանոց թղթադրամներ, շպրանց մորը.

— Վերցրու, — ասաց նա, այսօր գործերս լավ են գնացել և հաղթությունս տոնել եմ:

Շողիկի աշքերն ազահությունից պսպղացին: Նա չհարցրեց անգամ, թե այդ ինչ գործեր են:

Ամիսներ անցան: Սիմոնը տակավին լուր էր ու մոայլ: Բայց նրա անհանգիստ ուղեղը գործում էր գիշեր ցերեկ: Հազար ու մեկ մտքեր, միմյանցից սոսկախի, գալիս ու անցնում էին նրա գլխով, և նա ավելի էր խորասովված իր մեջ: Նա զգում էր, թե Վահանն ինչով է զբաղված այժմ: Նա սարսափում էր իր ենթադրությունից: Զգում էր, որ պատրաստվում է մի փոթորիկ, որ այսօր վաղը պայթելու է և կործանելու իրեն և իր զուն: Նա աղերսում էր աստծոն հեռացնել այդ փոթորիկն իր գլխից և բավականանալ նրա սոսկախի տանջանքներով:

Բայց ճակատագիրն ավելի զորավոր էր, քան նրա լուր աղերսանքները...

Գիշեր էր: Որ ժամը՝ Սիմոնը լցիտեր: Զգում էր, որ ուշ է: Նա պառկած էր երկու փոթորիկ սենյակներից մեկում, առանձին: Տրորվում էր ան-

կողնու մեջ և քոմը չէր գալիս Հանգստովթյուն տալու նրա տկար մարմնին
ու հոգնած ներկերին: Գիտեր, որ Վահանը տանը չէ և մտածում էր նրա
մասին: Մյուս սենյակից լսվում էր խորը քնած Շողիկի ու երեխա-
ների շնչառովթյունը: Ուրիշ ոչ մի ձայն, ոչ մի շշուկ:

Հանկարծ Հարեան սենյակի դռները կամացուկ բացվեցին: Սիմոնը
զգաց, որ Վահանն է:

«Մայրիկ, մայրիկ» լսեց նա մի քանի անգամ որդու շնչառնը:
Հետո նա լսեց Շողիկի զարթնելը, որդու հետ շնչալն ու ոտքի ելնելը:
Լսեց, որ մայր ու որդի զգուշ քայլերով դուրս եկան սենյակից: Նա գտավ
լուցկների տուփը ու կամեցավ քովը դրած փորքիկ լամպարը վառել, բայց
մտածեց ու շվառեց: Նա կամացուկ վեր կացավ և խարխափելով անցավ
մյուս սենյակի, այնտեղից անցավ նախասենյակի, որից դենը խոհանոցն էր:
Նա կանգ առավ մթության մեջ: Խոհանոցի դռները գոց էին, բայց այն-
ուեկ լույս կար: Սիմոնը մոտեցավ դրաներին, զգուշովթյամբ նրանց մի փո-
քը բաժանեց ու տեսավ հետեւալ պատկերը: Մայր ու որդի կանգ-
նած էին դեմ ու դեմ, երկուսն էլ տարօրինակ հուզված, երկուսն էլ գու-
նատ: Վահանը դուրս բերեց պիչակի գրանից թղթագրամների մի մեծ
կապոց և, տալով մորք, շնչաց.

— Դու այս փողերը թաքցրու մի ապահով տեղ, մնացյալը ոչինչ:
Ինձ բռնելը շատ էլ հեշտ չէ:

— Բայց գողությունը լավ բան չէ, — լսվեց Շողիկի ձայնը:
Միևնույն ժամանակ Սիմոնը նկատեց, թե ինչպես Շողիկի աշքերը
փայլեցին թղթագրամների կապոցը տեսնելիս և ինչպես նա դողդոշուն
ձեռքով վերցրեց կապոցը:

— Գողությունը լավ բան չէ, բայց հինգ հազար ոռութին լավ բան է:
Թող հայրս ինչքան ուզում է իր ազնվությունը քարողի, իսկ ես չեմ ուզում,
որ զու կիսաքաղցած ապրես: Թաքցրու:

Շողիկն այլևս ոչինչ չասաց: Նայեց ազ ու ձախ: Սիմոնը զգաց, որ նա
փողերը թաքցնելու համար ապահով տեղ է մինտրում: Տեսարանն այն-
քան զազրելի էր նրա համար, որ մի վայրկան կամեցավ հեռանալ, որ
շտեսնե: Բայց ի՞նչպես թողնել, որ մայր ու որդի անպատիժ ոտնատակ
անհն ցեխի մեջ մնացորդը նրա պատվի:

Սիմոնը բաց արավ դռներն ու մտավ խոհանոց:

Շողիկը բարձրածայն ճշաց: Վահանը մի վայրկան ցնցվեց, տեսնե-
լով հոր կիսամերկ, նիշար ու բարձր կերպարանքը լամպարի աղոտ լուսի
ներքո: Բայց իսկույն սեթ կարողացավ ուշքը ժողովել իր տարիքին ոչ հա-
տուկ կամքի ուժով:

— Ավագակներ, այդ ինչ եք անում այստեղ, — զոյսաց Սիմոնը,
բոլոնցքները սեղմելով, — ես ձեր զլուխը կշարդնի:
— Զես կարող, — արտասանեց Վահանը:

Սիմոնը նկատեց, որ նա մի ձեռք տարավ գրանը: Որդու այդ սպառ-
նալի շարժումը սպառեց Սիմոնի համբերության վերջին կաթիլը: Նրա
ուղեղը պղտորեց: Նայեց արյունալի աշքերով աչ ու ձախ: Պատի դարակ-
ներից մեկի վրա դրած էր մի աղյուս, որ Շողիկը գործ էր ածում դա-
նակները ժանգից մաքրելու համար: Մի ակնթարթում Սիմոնը վերցրեց
աղյուսը և ուժգին թափով ձգեց Վահանի վրա: Հարդար հասավ ուղիղ
Վահանի ճակատին: Եվ նա մի խուլ ճիշ արձակելով, փռվեց գետնի վրա:
Որդու արյունը շաղախն մոր ոտքերը:

— Այդ ի՞նչ արիր, զազան, — գոշեց Շողիկն ու ընկավ որդու վրա:

— Արի, ինչ որ պարտավոր էի անեկ, Այժմ թող ինձ զատեն աստված
ու մարդիկ:

Եվ, անմիջապես հաղովելով, վերցրեց Վահանի գողացած փողերը
և գնաց ոստիկանատուն անձնատուր լինելու իբրև որդեսպան:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԻՐՎԱՆՋԱՂԵ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՐ

Խմբագիր՝ Ս. Ս. Հակոբյան
Նկարիչ՝ Հ. Ա. Կարապետյան
Գեղ. խմբագիր՝ Բ. Վ. Մազմանյան
Տեխն. խմբագիր՝ Մ. Ն. Իավրյան
Վերսուլող սրբագրիչ՝ Ռ. Ս. Հովհաննես

ИБ 2141

Հանձնված է շարվածքի 03. 02. 1986 թ.: Ստորագրված է տպագրության՝ 3. 06. 1986 թ.: Թուղթ № 3, չափար՝ $60 \times 84^1/16$: Տպագրությունը՝ բարձր Տառատևական՝ «Գրքի սովորական»: Հրատ. 9,56 մամ., տպ. 11,0 մամ., պայմ. 10,23 մամ., տպ. 10,5 դոն. թ. օտա. Պատվեր 197: Տպագրանակ՝ 50 000:

Գինը՝ 95 կուգ.

«Լույս» հրատարակություն, Երևան-9, Կիրովի 19 ա:

Издательство «Луис», Ереван-9, ул. Кирова, 19 а.

ՀԵՍ Հրատարակությունների, պոլիգրո.ֆիայի և գրքի առեսթի գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Աւալերյան 55:

Гипография № 1 Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван, ул. Алавердяна, 65.